

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՏԱՎՈՒՇ

ՀԱՅՈՑ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սկզբնական համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

**Ի՞նչն է Կիլիկյան Հայաստանի համար պատճառ հանդիսացել XII դարի վերջին միջազգային բարենպաստ իրադրության ստեղծման:**

- 1) Կիլիկյան Հայաստանը ռազմաքաղաքական դաշինք էր հաստատել Վենետիկի և Ջենովայի հետ:
- 2) Իկոնիայի Սելջուկյան սուլթանությունը զբաղված էր իր տարածքները Բյուզանդիայի հաշվին ընդարձակելով:
- 3) Կիլիկյան Հայաստանը դարձել էր միջազգային առևտրի ամենախոշոր կենտրոնը:
- 4) Խաչակիրների պետությունները դադարել էին գոյություն ունենալուց Արևելքում:

2

**Տրվածներից ո՞րը մոնղոլական արշավանքների հետևանքներ չէ:**

- 1) վերսկսվեց բնակչության զանգվածային արտագաղթը
- 2) դաշտերը և հատկապես քաղաքները վերածվեցին արոտավայրերի
- 3) բնակչությունը ենթարկվեց ծանր հարկման
- 4) հայ ժողովրդին պարտադրեցին ընդունել մահմեդականություն XIII դարի սկզբին

3

**Ի՞նչ հետևանք է ունեցել 1828 թ. պարսկահայատակ հայերի վերաբնակեցումը:**

- 1) Ռուսական արքունիքին ներկայացվեց Հայաստանի ազատագրության նախագիծ:
- 2) Ախալքալաքի գավառում պարսկահայերը վերաշինեցին 50 գյուղ:
- 3) Արևելյան Հայաստանի տարածքի մեծ մասի վրա սկսվեց ազգահավաք գործընթաց:
- 4) Ժողովրդական պայքարը նոր թափ ստացավ:

4

**Մադրասի հայրենասիրական խմբակին վերաբերող հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ:**

- 1) Խմբակը կազմել և Եկատերինա I-ին է ներկայացրել Հայաստանի ազատագրության ծրագիրը:
- 2) Խմբակի անդամները հիմնել են տպարան և լույս ընծայել «Մշակ» թերթը:
- 3) Խմբակի անդամները կազմել ու հրատարակել են «Ռրոգայթ փառաց» գիրքը:
- 4) Խմբակը ստեղծել է առաջին ազգային կուսակցությունը:

5

**Տրված պնդումներից ո՞րն է ճիշտ բնորոշում Բեռլինի վեհաժողովից հետո Մկրտիչ Խրիմյանի և այլ գործիչների արած հետևությունը:**

- 1) Օտար տերությունների հետ հույսերը կապելու փոխարեն անհրաժեշտ է կազմակերպել հայ- քրդական զինական համագործակցություն:
- 2) Արևմտաեվրոպական տերությունների հետ հույսեր կապելու փոխարեն անհրաժեշտ է ապավինել միայն Ռուսաստանի օժանդակությանը:
- 3) Կարելի է առիթն օգտագործել և ստեղծել ոչ թե ինքնավար, այլ անկախ Հայաստան:
- 4) Օտար տերությունների հետ հույսեր կապելու փոխարեն անհրաժեշտ է կազմակերպել սեփական ժողովրդի զինված ազատագրական պայքար:

6

**Տրված պնդումներից ո՞րն է տեղի ունեցել Հայաստանի առաջին հանրապետության տարիներին:**

- 1) Նոր Բայազետում և Դիլիջանում բացվել են գյուղատնտեսական դպրոցներ, իսկ Ալեքսանդրապոլում՝ տեխնիկական միջնակարգ դպրոց:
- 2) Ընդունվել է օրենք պետական հանրային մատենադարան հիմնելու մասին:
- 3) Գաբրիել Սունդուկյանի «Պեպո» պիեսի բեմադրությամբ բացվել է հանրապետության առաջին պետական դրամատիկական թատրոնը:
- 4) Ստեղծվել է անգրագիտության վերացմանն աջակցող ընկերություն, որը հետագայում անվանվել է «Կորչի՝ անգրագիտությունը»:

7

**Տրվածներից ո՞րն է 1194 թ. Սիս քաղաքում Լևոն II-ի և Բոհեմունդ III-ի միջև կնքված հաշտության պայմանագրի պայմաններից:**

- 1) Բոհեմունդի որդի Ռայմոնդն ամուսնանալու էր Լևոնի դստեր՝ Զաբելի հետ:
- 2) Բոհեմունդը վերադարձնելու էր Կիլիկիայից խլված տարածքները:
- 3) Կողմերը ստեղծելու էին քրիստոնեա-մահմեդական դաշինք:
- 4) Հայ եկեղեցին ու վանքերը ազատվելու էին հարկեր վճարելուց:

8

**Խորհրդային Հայաստանի արդյունաբերացման քաղաքականությանը վերաբերող տրված պնդումներից ո՞րն է սխալ:**

- 1) Հայաստանն աստիճանաբար ագրարային երկրից վերածվել է արդյունաբերական հանրապետության:
- 2) Երևանում կառուցվել է ԽՍՀՄ առաջին կարբիդի գործարանը:
- 3) Լենինականը (Գյումրի) դարձել է հանրապետության ծանր արդյունաբերության կենտրոն:
- 4) Խորհրդային Հայաստանում աճել է բանվոր դասակարգի և գիտատեխնիկական անձնակազմի քանակը:

9

Ո՞վ է եղել Հաճընի 1920 թ. ինքնապաշտպանության բարձրագույն խորհրդի նախագահը:

- 1) Պետրոս Սարաճյանը
- 2) Ներսես Թավուզճյանը
- 3) Միհրան Տամատյանը
- 4) Սարգիս Ճեպեճյանը

10

Ո՞ր երկիրն է 1965 թ. ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

- 1) Կիպրոսը
- 2) Ուրուգվայը
- 3) Արգենտինան
- 4) Հունաստանը

11

Ազգային գործիչներից ո՞վ է ընտրվել 1906 թ. հրավիրված պատգամավորական Կենտրոնական ժողովի նախագահ:

- 1) Միմոն Զավարյանը
- 2) Խաչատուր Մալումյանը
- 3) Սարգիս Մեհրաբյանը
- 4) Ռուբեն Խանազատը

12

Բագրատունյաց թագավորության ենթակա թագավորություններից ո՞րն է առաջացել 987 թվականին:

- 1) Սյունիքի
- 2) Կարսի
- 3) Վասպուրականի
- 4) Տաշիր-Ձորագետի

13

Որքա՞ն հայկական դպրոց ու վարժարան է վերացվել Մեծ եղեռնի ժամանակ:

- 1) 2500
- 2) 1350
- 3) 2350
- 4) 1500

14

1935 թ. ո՞վ է ընտրվել ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղի նախագահ:

- 1) Բորիս Պիոտրովսկին
- 2) Աբրահամ Ալիխանյանը
- 3) Լևինտոն-Լեսսինգը
- 4) Հովսեփ Օրբելին

15

Ե՞րբ են թուրքերն առաջին անգամ հայտնվել Հայաստանում և Փոքր Ասիայում:

- 1) X դարում
- 2) VII դարում
- 3) VIII դարում
- 4) IX դարում

16

XVIII դարի սկզբում Սյունիքում ծավալված զինված պայքարին վերաբերող պնդումներից ո՞րն է սխալ:

- 1) Հայկական զորքերը Մխիթար սպարապետի և Տեր Ավետիսի հրամանատարությամբ ազատագրել են Մեղրին:
- 2) Դավիթ Բեկի ղեկավարությամբ Սյունիքում ստեղծվել է հայկական իշխանություն՝ Հալիձոր կենտրոնով:
- 3) 1727 թ. մարտին Հալիձորի ճակատամարտում թուրքական բանակից զոհվել է 13 000 զինվոր:
- 4) Սյունիքի ազատագրական պայքարի առաջին հաղթանակները Զևայի և Որոտանի բերդերի ազատագրումներն էին:

17

Մամիկոնյան տոհմի սպարապետներից ո՞վ է ասել հետևյալ խոսքերը:

*«Իմ այնքան ծառայությունների, արյուն ու քրտինք թափելու... հատուցումն ա՞յս եղավ: Բայց այս մահը երանի՜ թե ձիու վրա ինձ հասներ»:*

- 1) Արտավազդը
- 2) Վասակը
- 3) Սուշեղը
- 4) Համազասպը

18

Ի՞նչ առիթով են ասվել հետևյալ խոսքերը.:

*«Մենք չենք կարող երբևիցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը»:*

- 1) Բաթումի պայմանագրի կնքում
- 2) Մոսկվայի պայմանագրի կնքում
- 3) Կարսի պայմանագրի կնքում
- 4) Սևրի պայմանագրի կնքում

19

**Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից ո՞րն է ճիշտ:**

- 1) 1918 թ. ապրիլին հայկական, վրացական և արևելակովկասյան տարածքների միավորմամբ ստեղծված երկրամասը կոչվել է *Անդրկովկասյան ժողովրդական դաշնություն*:
- 2) Թուրքալեզու բոլոր ժողովուրդների միավորումը թուրքական դրոշի ներքո և սրբազան պատերազմը «անհավատների» դեմ կոչվել է *պանիսլամիզմ*:
- 3) Մեկ ազգի կամ կրոնական համայնքի ամբողջական կամ մասնակի բնաջնջմանը նպատակաուղղված պետական ծրագիրը հրեա իրավաբան Ռաֆայել Լեմկինը անվանել է *կոտորած*:
- 4) 1917 թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 13-ը Թիֆլիսում կայացած արևելահայերի ներկայացուցչական համաժողովը կոչվել է *Հայոց ազգային համահորհրդակցություն*:

20

**Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից ո՞րն է ճիշտ:**

- 1) *Հայկական ցեղասպանության արդարության մարտիկները* սփյուռքահայ կազմակերպություն էր, որի պայքարն ուղղված էր Հայոց ցեղասպանությունը չընդունած եվրոպական կառավարությունների դեմ:
- 2) «Ազգային միացյալ կուսակցություն» գաղտնի կազմակերպության հրապարակած թերթը կոչվում էր *«Երկունք»*:
- 3) Հայաստանի ազատագրության հայկական գաղտնի բանակը հայտնի է նաև *ԱՄԱԼԱ* անվամբ:
- 4) Այլախոհական շարժումը Հայաստանում սկզբնավորած խումբը կոչվում էր *«Հայկական միություն»*:

21

**Տրվածներից ո՞րն է V դարի հայ ազատագրական պատերազմների հետևանք:**

- 1) Հայաստանի երկու հատվածները միավորվեցին
- 2) պահպանվեց հայոց տանուտիրական համակարգը
- 3) հայ ժողովուրդը փրկվեց մահմեդականացումից
- 4) Արևելյան Հայաստանում հռչակվեց հայոց թագավորություն

22

**Տրվածներից որո՞ն է Մծբինի 298 թ. պայմանագրի հետևանք:**

- 1) հայ-պարսկական սահմանը գծվեց Հեր գավառով
- 2) Հայաստանին վերադարձվեց Փոքր Հայքը
- 3) ճանաչվեց Մեծ Հայքի թագավորության անկախությունը
- 4) Մեծ Հայքին միացվեց Փայտակարանը

23

Ո՞ր տարբերակում է Տիգրան Մեծի կառավարման շրջանում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակագրական հաջորդականությունը ճիշտ դասավորված:

- ա. «Յոթանասուն հովիտների» վերադարձը
- բ. հայ-հռոմեական պատերազմի սկիզբը
- գ. հայ-պոնտական դաշինքի կնքումն Արտաշատում
- դ. Պտղոմայիս քաղաքի նվաճումը
- ե. Վիրքի և Ադվանքի հպատակեցումը
- զ. Մարաստանի նվաճումը

- 1) գ, ե, զ, ա, դ, բ
- 2) ե, գ, զ, ա, բ, դ
- 3) գ, ե, ա, զ, բ, դ
- 4) ե, գ, ա, զ, դ, բ

24

Ո՞ր տարբերակում է պատմական իրադարձությունների ժամանակագրական հաջորդականությունը ճիշտ դասավորված:

- ա. Դվին քաղաքի ազատագրումը թյուրք-սելջուկներից
- բ. Սամցխե-Ջավախքի իշխանության ստեղծումը
- գ. Լոռե քաղաքի գրավումը մոնղոլների կողմից
- դ. Ամբերդ ամրոցի ազատագրումը թյուրք-սելջուկներից
- ե. Երզնկայի գրավումը մոնղոլների կողմից
- զ. Տաշիր-Ձորագետի թագավորության ընդգրկումը վրացական պետության կազմի մեջ

- 1. դ, զ, գ, ա, բ, ե
- 2. դ, գ, ա, զ, բ, ե
- 3. գ, դ, ա, գ, ե, բ
- 4. գ, ա, դ, ե, գ, բ

Ո՞ր տարբերակում է Վանի թագավորության արքայի և նրա գործունեության համապատասխանեցումը ճիշտ կատարված:

**Արքա**

**Գործունեություն**

ա. Սարգուրի I  
բ. Իշպուհինի  
գ. Մենուա  
դ. Սարգուրի II  
ե. Ռուսա I

1. համադաշնությունից անցում է կատարել կենտրոնացված պետության
2. ետ է գրավել Արդինի-Մուսասիրը Սարգոն II-ից
3. հարկատու է դարձրել Մալաթիայի թագավորությունը
4. կատարել է գրային բարեփոխում
5. կառուցել է Տուշպա մայրաքաղաքը
6. ստեղծել է Վանի աշխարհակալությունը

- 1) ա-4, բ-6, գ-5, դ-3, ե-1
- 2) ա-5, բ-4, գ-3, դ-1, ե-2
- 3) ա-5, բ-6, գ-3, դ-1, ե-4
- 4) ա-4, բ-2, գ-5, դ-6, ե-1

Ո՞ր տարբերակում է օտարազգի արքայի և հայերի մասին նրա արած վկայության համապատասխանեցումը ճիշտ:

ա. Շապուհ II  
բ. Վաղարշ  
գ. Խոսրով II  
դ. Մավրիկիոս

1. «Դուք բնավ ոչինչ համարեցիք այս աշխարհը. քաջաբար մեռան նրանք, որ մեռան, և առավել քաջաբար ապրում եք դուք»:
2. «Ամեն քրիստոնյա, որ իմ իշխանության տակ է, հայոց հավատին թող հարի»:
3. «Անհնազանդ մի ազգ են մեր միջև: Բայց ե՛կ ես իմս ժողովեմ ու Թրակիա ուղարկեմ, և դու քոնը ժողովի՛ր և հրամայի՛ր Արևելք տանել»:
4. «Եթե կարողանաս հաղթել նրանց և պարտադրես ծառայելու, ես նրանց թիկունքը չեմ պաշտպանի»:
5. «Աղվե՛ս, այդ դու՞ էիր խանգարիչը, որ այսքան չարչարեցիր մեզ. . . Ես քեզ պիտի աղվեսի մահով սպանեմ»:

- 1) ա-5, բ-1, գ-2, դ-3
- 2) ա-2, բ-5, գ-1, դ-4
- 3) ա-2, բ-4, գ-1, դ-5
- 4) ա-5, բ-2, գ-4, դ-3

27

**Տրված պնդումներից ո՞րն է ճիշտ:**

- 1) Հայկական լեռնաշխարհի կենտրոնում արևելքից արևմուտք ձգվում է Հայկական Պար լեռնաշղթան, որը սկսվում է Վանա լճից հյուսիս գտնվող Սիփան սարից:
- 2) Հայկական լեռնաշխարհը հյուսիսից եզերվում է Կուր գետով, հյուսիս-արևմուտքից՝ Պոնտոսի լեռներով, հարավից՝ Հայկական Տավրոսի լեռնաշղթայով և Հյուսիսային Միջագետքի հարթավայրով:
- 3) Հայկական լեռնաշխարհից սկիզբ առնող Տիգրիս և Եփրատ գետերը միախառնվում են Ակն քաղաքի մոտ և թափվում Կասպից ծով:
- 4) Կուր գետը ունի մոտ հազար կմ երկարություն և ամբողջապես հոսում է Հայաստանի տարածքով:

28

**Տրված կոթողներից որի՞ ճարտարապետն է Ալեքսանդր Թամանյանը:**

- 1) Ազգային ժողովի շենքի
- 2) Մայր Հայաստան հուշահամալիրի
- 3) Սարդարապատի հուշահամալիրի
- 4) Կառավարության շենքի

29

**Ո՞ր տարածքների հիման վրա է 1828 թ. ձևավորվել Հայկական մարզը:**

- 1) Նախիջևանի խանության և Օրդուբադի գավառի
- 2) Երևանի և Նախիջևանի նախկին խանությունների
- 3) Երևանի և Ալեքսանդրապոլի գավառների
- 4) Նախիջևանի նախկին խանության և Նոր Բայազետի գավառի

30

**Ո՞վ է «Խնջույք Քուռ գետի ափին» կտավի հեղինակը:**

- 1) Ստեփանոս Ներսիսյանը
- 2) Եղիշե Թադևոսյանը
- 3) Վարդգես Սուրենյանցը
- 4) Գևորգ Բաշինջաղյանը

31

**Որքա՞ն հայ է ներգաղթել Խորհրդային Հայաստան 1921-1925 թվականներին:**

- 1) 30 000
- 2) 50 000
- 3) 40 000
- 4) 20 000

32

**Ո՞ր երկրների համատեղ արված հայտարարությունից է տրված մեջբերումը:**

*«Հաշվի առնելով մարդկության ու քաղաքակրթության դեմ Թուրքիայի կողմից կատարված այս նոր հանցագործությունները՝ ... դաշնակից կառավարությունները սույնով հրապարակավ հայտնում են Բարձր դռանը, որ իրենք այդ հանցագործությունների համար անձնապես պատասխանատու են համարելու թուրքական կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև կառավարության տեղական այն ներկայացուցիչներին, ովքեր մասնակից են եղել կոտորածներին»:*

- 1) Իտալիա, Ռուսաստան, ԱՄՆ
- 2) ԱՄՆ, Ռուսաստան, Իտալիա
- 3) Ֆրանսիա, Ավստրո-Հունգարիա, Մեծ Բրիտանիա
- 4) Մեծ Բրիտանիա, Ռուսաստան, Ֆրանսիա

33

**Որտե՞ղ է հնչել Արամ Մանուկյանի հետևյալ ելույթը:**

*«Ամեն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եթե նայող կա, նայում է միայն հանուն իր շահերի: Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի տաճկական ճակատ՝ տուն գնացող ռուսներին փոխարինելու համար....»:*

- 1) Հայոց ազգային համախորհրդակցությունում
- 2) Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի նիստում
- 3) Արևմտահայերի ազգային համագումարում
- 4) Երևանի Հայոց ազգային խորհրդի նիստում

34

**Ի՞նչ իրադարձության կապակցությամբ է Նիկոլ Աղբալյանը ասել հետևյալ խոսքը.**

*«Այն ջահը, որ մենք վառում ենք այսօր Հայաստանի բարձրավանդակի վրա չի հանգչի երբեք և կլուսավորի Առաջավոր Ասիան»:*

- 1) հանրային կրթության նախարարության ստեղծման
- 2) պետական համալսարանի բացման
- 3) Հայաստանի գիտական ինստիտուտի ստեղծման
- 4) Երևանի պետական թատրոնի բացման

35

**Տերմինների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ:**

1. Վանի թագավորությունում կիրառված գրային համակարգերից մեկը կոչվում էր *մեհենագիր*:
2. Վանի թագավորությունը բաժանվում էր խոշոր վարչական շրջանների, որոնք կոչվում էին *մարզեր*:
3. Աքեմենյան տերությունը բաժանվում էր խոշոր վարչական շրջանների, որոնք կոչվում էին *հյուպարքոսություններ*:
4. Վանի թագավորությունում գործի գերագույն հրմանատարը կոչվում էր *առաջին սպարապետ*:
5. Բեհիսթունյան եռալեզու արձանագրության պարսկերեն բաժնում Հայաստանը անվանվում էր *Ուրարտու*:

36

**Տերմինների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ:**

1. Արշակունյաց շառավիղներից ձևավորված ազնվական խավի ներկայացուցչին անվանում էին *ոստանիկ*:
2. Ժառանգաբար հորից որդուն անցնող մասնավոր հողատիրության ձևը կոչվում էր *գանձագին*:
3. Հայ նախարարների տեղն արքունիքում սահմանող փաստաթուղթը կոչվում էր *գորանամակ*:
4. Արքունի կալվածքների ու գանձարանի հսկողությունը իրականացնող գործակալին անվանում էին *հայր մարդպետ*:
5. Թագավորական ոստանի պաշտպանությունը իրականացնող հեծյալ ջոկատներից կազմված զորամասը կոչվում էր *արքունական գունդ*:

37

**Տրվածներից որո՞նք են XIX դարի 80-ական թվականներին Արևմտյան Հայաստանում ծավալված ֆիդայական շարժման պատճառներ:**

1. հայ ժողովրդի քաղաքական և տնտեսական ծանր վիճակը
2. արևմտահայության կրթական բարձր մակարդակը
3. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության գործունեության արգելումը
4. Օսմանյան կայսրության հրապարակած բարեփոխումների ծրագիրը
5. արևմտահայությանը հողազրկելու և հայրենիքից դուրս մղելու թուրքական պետական քաղաքականությունը

**1918 թվականի Մայիսյան հերոսամարտերին վերաբերող հետևյալ պնդումներից որո՞նք են սխալ:**

1. Սարդարապատի ջոկատի հրամանատարությունը ստանձնել է Մովսես Սիլիկյանը:
2. Սարդարապատի ճակատամարտի փայլուն հաղթանակը ստիպել է թուրքական զորքին անցնել Ախուրյանի արևմտյան ափը:
3. Ղարաքիլիսայի հերոսամարտը սկսվել է Գարեգին Նժդեհի փոքրաթիվ ուժերի գրոհով:
4. Հայոց զորքի հետ կռվի դաշտ մեկնած հոգևորականների ջոկատը գլխավորել է Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը:
5. Հայկական զորքի առաջին խոշոր հաղթանակը թուրքական զորքի դեմ ձեռք է բերվել Բաշ Ապարանի ճակատամարտում:

**Տրված պնդումներից որո՞նք են վերաբերում Արտաշես I-ի գործունեությանը:**

1. Մեծ Հայքին է վերամիավորել Ատրպատականը:
2. Մեծ Հայքին է միացրել Փայտակարանը և Կասպեից երկիրը:
3. Ապաստան է տվել Պոնտոսի արքա Հաննիբալին:
4. Կառուցել է նաև Զարեհավան և Զարիշատ քաղաքները:
5. Կնքել է հայ-պարթևական դաշինք Օրոդես II-ի հետ:

**Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ:**

1. Հայաստանը թուլացնելու նպատակով պարսից արքա Պերոզը հողեր ժառանգելու իրավունք է շնորհել սեպուհներին:
2. Արճեշի ճակատամարտի հաղթական ավարտից ոգևորված հայ ապստամբները շարժվեցին դեպի Բագրևանդ գավառ:
3. 720-ական թթ. հայերի նկատմամբ ճնշումները սաստկանում էին բյուզանդական զորքերի պարբերաբար կրկնվող արշավանքների պատճառով:
4. Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի կառավարման տարիներին՝ 661-685 թթ., շարունակվել է Հայաստանի տնտեսական ու քաղաքական անկումը:
5. Ավարայրի ճակատամարտում նահատակված հայորդիներին սրբերի շարքին դասելու համար հիմք է ծառայել IV դարի առաջին կեսին սահմանված կարգը:

41

Գտե՛ք այն իրադարձությունը, որը խախտում է տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը:

1. Բյուզանդական զորքի պարտությունը Յարմուք գետի ափին
2. Արևմտյան և Արևելյան Հայաստանների միավորումը Թեոդորոս Ռշտունու կողմից
3. Հայ-արաբական պայմանագրի կնքումը Թեոդորոս Ռշտունու և Մուավիայի միջև
4. Կոստանդին II-ի 100 հազարանոց բանակի ներխուժումը Հայաստան
5. Վարազդիրոց Բագրատունուն կյուրապաղատի կոչման շնորհումը

42

Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:

1. պետական կոնսերվատորիայի բացումը
2. Երևանի գլխավոր հատակագծի կազմումը
3. օպերայի և բալետի պետական թատրոնի բացումը
4. Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնի հիմնադրումը
5. Հենրիկ Մալյանի ղեկավարությամբ Կինոդերասանի թատրոն-ստուդիայի բացումը

|  |  |  |  |  |  |
|--|--|--|--|--|--|
|  |  |  |  |  |  |
|--|--|--|--|--|--|

43

Ստեղծագործության անունը համապատասխանեցրե՛ք հեղինակի անվանը:

*Ստեղծագործություն*

*Հեղինակ*

- ա. «Սպասում» կտավ  
բ. «Գայանե» բալետ  
գ. «Պեպո» ֆիլմ  
դ. «Ալմաստ» օպերա  
ե. «Հովհաննես Բաղրամյան»  
ձիարձան

1. Համո Բեկնազարյան
2. Արամ Խաչատրյան
3. Նորայր Կարգանյան
4. Արմեն Տիգրանյան
5. Մինաս Ավետիսյան
6. Ալեքսանդր Սպենդիարյան

|   |   |   |   |   |
|---|---|---|---|---|
| ա | բ | գ | դ | ե |
|   |   |   |   |   |

*Գործիչ*

ա. Ներսեհ Կամսարական  
բ. Կոմիտաս Մամիկոնյան  
գ. Սմբատ Բագրատունի  
դ. Դավիթ Մամիկոնյան  
ե. Աշոտ Արծրունի

*Իրադարձություն*

1. 748 թ. հակաարաբական ապստամբությունը
2. Արյան լճի ճակատամարտը
3. Ս. Հռիփսիմե տաճարի կառուցումը
4. Թալինի եկեղեցու կառուցումը
5. 703 թ. հակաարաբական ապստամբությունը
6. Նկան ամրոցի պաշտպանությունը

|   |   |   |   |   |
|---|---|---|---|---|
| ա | բ | գ | դ | ե |
|   |   |   |   |   |

Ստորև տրված պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրե՛ք «Ճիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:

1. Խորհրդային Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսարիատի առաջին ժողկոմ է նշանակվել Ալեքսանդր Բեկզադյանը:
2. 1918 թ. սեպտեմբերին ստեղծվել է հանրային կրթության առանձին նախարարությունը:
3. 1919 թ. հունիսին Երևանում ստեղծվել է համալսարանական ընդհանուր հանձնաժողովը:
4. Հայաստանի երկրորդ բուհն եղել է Երևանի բարձրագույն երաժշտական դպրոցը:
5. Երևանի պետական համալսարանի հիմքի վրա կազմակերպվել են գյուղատնտեսական, տնտեսագիտական, պոլիտեխնիկական, մանկավարժական և բժշկական ինստիտուտները:
6. 1939 թ. Մոսկվայում նշվել է «Սասունցի Դավիթ» հայկական ժողովրդական էպոսի 100 ամյակը:

**Ո՞ր տարբերակում են տերմինների կամ հասկացությունների բացատրությունները սխալ:**

- ա. Հայկական հարցի «լուծմանը» թուրքերին մասնակից դարձնելու համար սուլթանը 1891 թ. ստեղծեց մոտ 30 հեծելազնդեր, որոնք իր անունով կոչվեցին *համիդիե*:
- բ. 1916 թ. անգլո-ֆրանսիական գաղտնի բանակցությունների արդյունքում Օսմանյան կայսրության ասիական տիրույթների բաժանման վերաբերյալ ստորագրված համաձայնագիրը կոչվում էր *Մայքս-Պիկոյի համաձայնագիր*:
- գ. Ռուսական բանակի գերագույն սպայակույտի 1917 թ. նոյեմբերի 16-ի հրամանով Հայկական ճակատում կազմավորվող զորամիավորը կոչվում էր *Կովկասյան կորպուս*:
- դ. Հայաստանի առաջին հանրապետության անկախությունը հռչակած մարմինը կոչվում էր *Հայոց ազգային խորհուրդ*:
- ե. 1918 թ. գարնանը Արևելյան Հայաստանը և այլ տարածքներ նվաճելու համար ստեղծված 50-հազարանոց թուրքական զորամիավորումը կոչվում էր *Կարս*:
- զ. Թիֆլիսում 1917 թ. մարտին ստեղծված երկրամասի գործադիր իշխանության նոր մարմինը կոչվում էր *ԱՇԴՀ-ի հատուկ կոմիտե*:
- է. Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության տապալումից քիչ հետո Անդրկովկասում ստեղծված իշխանության նոր մարմինը կոչվում էր *Անդրկովկասյան կոմիսարիատ*:

- 1) բ, գ, է
- 2) դ, ե, է
- 3) ա, գ, զ
- 4) գ, ե, զ

**Ո՞ր տարբերակում են Կիլիկյան Հայաստանում գործածված տերմինների բացատրությունները ճիշտ:**

- ա. Արքունի եկամուտները և ծախսերը տնօրինող գործակալը կոչվում էր իշխանաց իշխան:
- բ. Դատարաններում օգտագործված Անտիոքի իշխանության օրենսգիրքը կոչվում էր «Անտիոքի ասիզներ»:
- գ. Թագավորի առաջին խորհրդականը կոչվում էր պայլ:
- դ. Դատական բարձրագույն մարմինը կոչվում էր արքունի դատարան:
- ե. Բանակի ընդհանուր հրամանատարը կոչվում էր սպասալար:
- զ. Կարգ ու կանոնի պահպանմանը հետևող գործակալը կոչվում էր ասպետ:
- է. Բանակի սպառազինությամբ և պարենի մատակարարմամբ զբաղվող պաշտոնյան կոչվում էր կապիտան:

- 1) ե, գ, է
- 2) ա, դ, է
- 3) բ, գ, դ
- 4) գ, ե, զ

**Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են սխալ:**

- ա. Հայոց արքա Վաղարշ II-ի ճիշտ քաղաքական դիրքորոշման արդյունքում Հայաստանից հեռացվեցին հռոմեական լեզեոնները:
- բ. Հռանդեայի ճակատամարտում հռոմեացիների պարտությունը նպաստեց Հայաստանի նկատմամբ Ներոն կայսեր դիրքորոշման փոփոխությանը:
- գ. Օգոստոս կայսեր հեռագնա ծրագիրը նպատակ ուներ միավորելու Հայաստանը Կապադովկիայի հետ և ստեղծելու միացյալ ուժեղ պետություն՝ ընդդեմ Պարթևստանի:
- դ. Խառանի ճակատամարտում հռոմեացիների պարտության հետևանքով Մեծ Հայքին միացվեց Կորդուքը և Հյուսիսային Միջագետքը:
- ե. Ակեցիումի ճակատամարտից հետո հայ-պոնտական ուժերը մտան Հայաստան և արդյունավետ պայքար մղեցին հռոմեացիների դեմ:
- զ. Պարսկաստանում Սասանյանների իշխանության գալը թուլացրեց Արշակունիների դիրքերը Հայաստանում:
- է. Ք. ա. 94 թ. Ծոփքի վերամիավորմամբ Մեծ Հայքը դուրս է եկել Արևմտյան Եփրատի ափերը, որից այն կողմ տարածվում էր Կապադովկիայի թագավորությունը:

- 1) դ, է, գ
- 2) գ, դ, է
- 3) ա, բ, գ
- 4) ա, դ, է

**Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են սխալ:**

- ա. Վարդանանց պատերազմի արդյունքը հայոց երկրի ներքին ինքնուրույնության պահպանումն էր:
- բ. Խաղխաղի ճակատամարտի հետևանքը պարսից զորավար Միհրանի քսան հազարանոց զորքի պարտությունն էր:
- գ. X դարի սկզբին հայ իշխանների միջև առաջացած տարաձայնություններին Սաջյան ամիրաների միջամտության առիթը Նախճավան քաղաքի համար վեճն էր:
- դ. 1137 թ. Հովհաննես Կոմսենոս կայսեր՝ Կիլիկիա արշավանքի պատճառը Թորոս I-ին միջերկրածովյան շրջանից դուրս մղելն էր:
- ե. Կիլիկիայում Բոհեմունդ IV-ի որդի Ֆիլիպին հայոց գահից զրկեցին նրա ոչ հայամետ քաղաքականության պատճառով:
- զ. 1307 թ. Միսի եկեղեցական ժողովի հետևանքը Հայոց եկեղեցու ծեսերի և արարողությունների մի մասի հարմարեցնելն էր ասորական եկեղեցու դավանանքին:
- է. Անիի Բագրատունիներին ենթակա թագավորությունների առաջացման պատճառներից էին ավատատիրական մասնատվածությունը և իշխանների կենտրոնախույս ձգտումները:

- 1) ա, գ, դ
- 2) բ, դ, գ
- 3) բ, է, գ
- 4) ա, գ, է

**Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ տրված պատմական իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը:**

- ա. Երվանդական թագավորության անկախության վերականգնումը
- բ. Հայաստանի վերածումը սատրապության
- գ. Հայկական արքայական առաջին դրամների հատումը
- դ. Վահագնի գահակալումը
- ե. Բագարան սրբավայր-քաղաքի կառուցումը
- զ. Տիգրան Երվանդյանի դառնալը Աքեմենյան տերության արևմտյան կեսի փոխարքա
- է. Երվանդ II-ի կողմից ոսկե դրամների հատումը
- ը. Արշամաշատ քաղաքի կառուցումը
- թ. Ալեքսանդր Մակեդոնացու զորքի ժամանումը Հելլեսպոնտոս
- ժ. Դարեհ III-ի նշանակվելը Հայաստանի սատրապ

- 1) բ
- 2) է
- 3) ա
- 4) ժ

51

Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ տրված պատմական իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը:

- ա. Գող Վասիլի իշխանության ստեղծումը
- բ. Գագիկ Կարսեցու հաստատվելը Ծամնդավ բերդաքաղաքում
- գ. Հովհաննես–Սմբատ և Աշոտ թագավորների մահը
- դ. Փիլարտոսի իշխանության ստեղծումը
- ե. Հայ բնակչության կոտորածը Մանանադիի Սմբատաբերդ լեռան մոտ
- զ. Ալփ Արսլանի զորքերի կողմից Անիի գրավումը և ավերումը
- է. սելջուկների երրորդ արշավանքը դեպի Հայաստան
- ը. Դավիթ Շինարարի թագադրումը
- թ. Մանազկերտի ճակատամարտը
- ժ. խաչակրաց պետության՝ Եդեսիայի կոմսության ստեղծումը

- 1) է
- 2) գ
- 3) դ
- 4) բ

52

Ո՞ր տարբերակում են պատմական իրադարձությունները դասավորված ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ:

- ա. Լեոնային Ղարաբաղի անկախության հանրաքվեի անցկացումը
- բ. Շուշիի ազատագրումը
- գ. Հորադիզի շրջանի ազատագրումը
- դ. Քարվաճառի հյուսիսային շրջանի և Օմարի լեռնանցքի ազատագրումը
- ե. «Օդակ» ռազմական գործողության իրականացումը
- զ. Մարտակերտ քաղաքի ազատագրումը
- է. Կրկժանի ազատագրումը
- ը. «Հռչակագիր Լեոնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» փաստաթղթի ընդունումը
- թ. ԼՂՀ զինանշանի և օրհներգի ընդունումը

- 1) ը, է, ա, է, թ, բ, գ, դ, զ
- 2) է, ը, ա, է, բ, թ, գ, զ, դ
- 3) է, ը, է, ա, թ, բ, գ, զ, դ
- 4) ը, ա, է, է, բ, թ, գ, դ, զ

- |                |                                                            |
|----------------|------------------------------------------------------------|
| ա. Ստրաբոն     | 1. «Հայոց թագավոր Սանատրուկն ուներ միջակ հասակ, բայց       |
| բ. Տակիտոս     | հակված էր դեպի ամեն մի մեծ բան և մանավանդ դեպի             |
| գ. Պլուտարքոս  | պատերազմական գործը»                                        |
| դ. Արիանոս     | 2. «Նոր մայրաքաղաքը բնակեցնելու համար Տիգրանն այստեղ է     |
| ե. Ապպիանոս    | հրավիրում հայերից լավագույններին...»                       |
| զ. Դիոն Կասիոս | 3. «...հայերը նետահարելով հռոմեացիներին, շատերին իսկույն   |
| է. Պոլիբիոս    | սպանեցին, իսկ շատ շատերին էլ վիրավորեցին»                  |
|                | 4. «Հայերը մնացին առանց թագավորի, անտերունչ»               |
|                | 5. Հայաստանն... աճել է Արտաշեսի ջանքերով... և ուստի այստեղ |
|                | բոլորը միալեզու են»                                        |
|                | 6. «...այն լի էր գանձերով և աստվածներին նվիրաբերված        |
|                | թանկարժեք ընծաներով»                                       |
|                | 7. «Արտաշեսը հրամայել է որոշել գյուղերի և ագարակների       |
|                | սահմանները, կոփել է տվել քառակուսի քարեր և տնկել հողի մեջ» |
|                | 8. «Արմենիայի մեծագույն մասի տիրակալ»                      |

- 1) ա-5, բ-4, գ-6, դ-1, ե-2, զ-3, է-8
- 2) ա-8, բ-4, գ-6, դ-7, ե-2, զ-5, է-3
- 3) ա-8, բ-7, գ-2, դ-1, ե-6, զ-4, է-3
- 4) ա-5, բ-7, գ-2, դ-4, ե-6, զ-3, է-8

- ա. Հայդուկային խմբեր ստեղծվել են Սասունում, Վանում, Սեբաստիայում:
- բ. Կիլիկիայում հայտնի «Մեծ չեչույի» առաջնորդը Թորոս Ծառուկյանն էր:
- գ. Հրայրի համոզմամբ՝ օսմանյան բռնատիրությունից ազատագրումը հնարավոր էր միայն կայսրության բոլոր ժողովուրդների համատեղ պայքարի շնորհիվ:
- դ. 1880-ական թթ. կեսին գործող ֆիդայական խմբերի նշանավոր ղեկավարներից էր Անդրանիկը:
- ե. Աղբյուր Սերոբը Ռումինիայում գտնվելու ժամանակ է անցել դաշնակցության շարքերը:
- զ. Արաբոն և իր 16 զինակիցները հերոսի մահով ընկել են Բիթլիսից-Մուշ տանող ճանապարհին՝ Բաբշենի կովում:
- է. Թավրիզում հնչակյանների հիմնադրած «Խարիսխ» զինագործական արհեստանոցը զենք է մատակարարել հայդուկներին:

- 1) գ, դ, ե
- 2) ա, բ, է
- 3) գ, ե, զ
- 4) ա, գ, ե

**Տրված պնդումներից որո՞նք են սխալ:**

- ա. Կարսի կոնֆերանսում թուրքական պատվիրակությունը մասնակի բավարարել է հայկական կողմի պահանջները և հայերին վերադարձրել Կողբի աղահանքերը:
- բ. «Ռուս-թուրքական բարեկամության և եղբայրության» պայմանագրով ՀՍԽՀ կազմում էր մնալու Ալեքսանդրապոլի գավառը:
- գ. 1923 թ. հուլիսի 7-ի որոշումով Լեռնային Ղարաբաղին տրամադրվել է ինքնավար մարզի կարգավիճակ:
- դ. «Լեռնահայաստանի» վարչապետ ընտրված Գարեգին Նժդեհը պարզևատրվել է «Խուստովիյան արծիվ» շքանշանով:
- ե. ՌԿ(Բ)Կ կովկասյան բյուրոյի պլենումը 1921 թ. հուլիսի 5-ի նիստում արդարացիորեն որոշվել է Լեռնային Ղարաբաղը միացնել Խորհրդային Հայաստանին:
- զ. Կարսի պայմանագրով Նախիջևանը ինքնավար տարածքի կարգավիճակով փոխանցվել է Ադրբեջանին՝ երրորդ պետության չզիջելու պայմանով:
- է. Քեմալա-բոլշևիկյան գործարքով ոչ միայն Արևմտյան Հայաստանի, այլև Արևելյան Հայաստանի տարածքների զգալի մասը դուրս մնացին Խորհրդային Հայաստանի սահմաններից:

- 1) ա, ե, գ
- 2) բ, գ, ե
- 3) բ, դ, գ
- 4) ա, գ, է

**1894-1896 թթ. ազատագրական պայքարի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ:**

- ա. 1896 թ. Վանի զինվորական մարմնի որոշմամբ Այգեատանում ստեղծվել է 30 դիրք՝ հարակից մահմեդական թաղամասերի դիմաց:
- բ. 1896 թ. հունիսի 8-ին Պարսկաստանի սահմանագլխին՝ Ս. Թադեի վանքից ոչ հեռու, վանեցիների վրա են հարձակվել քրդական մագրիկ ցեղի հրոսակները:
- գ. 1894 թ. ավելի քան 40 000-անոց թուրքական բանակի դեմ սասունցիները կռվել են 2 հազար քաջերով:
- դ. 1895 թ. հոկտեմբերի 12-ին Արեգին գյուղում հրավիրած ժողովում հնչակյան գործիչները որոշել են Զեյթունը թշնամուց պաշտպանելու համար դիմել ապստամբության:
- ե. 1894 թ. օգոստոսի սկզբի արյունալի մարտերից հետո սասունցիները ստիպված թողել են Տավրոսիկը և քաշվել Անդոկի լանջերը:
- զ. 1895 թ. աշնանը Մալաթիայի հայերը Եդիշե քահանա Խաչատրյանի գլխավորությամբ քաղաքից վտարել են թուրք ոստիկաններին:
- է. 1896 թ. Մեծ տերությունների միջնորդությամբ Հալեպում կնքված հաշտությամբ Զեյթունում տեղակայվել է թուրքական զորք:

- 1) դ, ե, է
- 2) ա, դ, է
- 3) բ, ե, գ
- 4) գ, դ, գ

- |                         |                                                                               |
|-------------------------|-------------------------------------------------------------------------------|
| ա. Զաքարիա Չազեցի       | 1. 948 թ. կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Արգինայի վանք                       |
| բ. Հովսեփ Ա Վայոցձորցի  | 2. Նշանակվել է մեծ դատավոր Վահանանց ապստամբության ժամանակ                     |
| գ. Ներսես Բ Բագրևանդացի | 3. Ս. Հռիփսիմե տաճարի կառուցումը                                              |
| դ. Գևորգ Գառնեցի        | 4. 869 թ. եկեղեցական ժողովի հրավիրումը հայ իշխանների մասնակցությամբ           |
| ե. Անանիա Մոկացի        | 5. Շահապիվանի եկեղեցական ժողովի հրավիրումը                                    |
| զ. Կոմիտաս Մամիկոնյան   | 6. Բագարանում Աշոտ Ա Բագրատունու օծումը հայոց թագավոր                         |
| է. Սահակ Պարթև          | 7. Վռամ IV-ի համաձայնությամբ հայոց սպարապետ է նշանակվում Համազասպ Մամիկոնյանը |
|                         | 8. 554 թ. Դվինի երկրորդ եկեղեցական ժողովի գումարումը                          |

- 1) ա-4, բ-5, գ-1, դ-6, ե-8, զ-3, է-7
- 2) ա-8, բ-2, գ-4, դ-1, ե-7, զ-6, է-5
- 3) ա-4, բ-5, գ-8, դ-6, ե-1, զ-3, է-7
- 4) ա-6, բ-3, գ-8, դ-4, ե-1, զ-2, է-5

**Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ:**

1. Արևմտահայերի 2-րդ համագումարի ընտրած Արևմտահայ գործադիր մարմնի՝ Հայաստանի կառավարությանը հասցեագրած դիմումում Առաջին հանրապետությունն կոչվում էր *Արարատյան Հանրապետություն*։
2. Արցախահայության առաջին համագումարում ստեղծված վարչաքաղաքական միավորը կոչվում էր *Ղարաբաղի մարզային խորհուրդ*։
3. Նադիր շահի կողմից Ղարաբաղում ստեղծված մելիքություններն անվանվում էին *սղնախներ*։
4. Հայկական II-V կամավորական ջոկատներից ստեղծված միացյալ զորախումբն կոչվում էր *Առանձին հայկական զունդ*։
5. Առաջին աշխարհամարտում Ֆրանսիական զորքի կազմում հիմնականում հայ կամավորներից ստեղծված զորամիավորումը կոչվում էր *Արևելյան լեգեոն*։
6. Խորհրդային Հայաստանին և նրա սովյալ բնակչությանը արտաքին օգնության կազմակերպման համար 1921 թ. ստեղծված մարմինը կոչվում էր *Հայկական ազգային կոմիտե*։
7. Փարիզի խաղաղության վեհաժողովին մեկնած և արևմտահայերի շահերը ներկայացնող պատվիրակությունը կոչվում էր *Հայոց ազգային պատվիրակություն*։
8. Հակահամիդյան շարժման մեջ ազդեցիկ դիրք ունեցող երիտթուրքական կազմակերպությունը կոչվում էր *Միություն և առաջադիմություն*։

**Տերմինների կամ հասկացությունների տրված բացատրություններից որո՞նք են ճիշտ:**

1. Արմավիրը Երվանդաշատին կապող ճանապարհը կոչվում էր «Արքունի պողոտա»։
2. Արտաշեսյան թագավորության հռչակումով Հայաստանի տարածքում ստեղծվեցին երկու պետություններ, որոնք կոչվեցին Մեծագույն Հայք և Փոքր Հայք։
3. Վանի թագավորությունում կիրառված գործակալությունները կոչվում էին «սահմանապահ կուսակալ», «աշխարհակալ», «գավառակալ»։
4. Երվանդունյաց Հայաստանում հոգևոր գերագույն առաջնորդին անվանում էին քրմապետ կամ Մեծ դատավոր։
5. Աքեմենյանների օրոք Հայաստանի արևմտյան մասի կառավարչին անվանում էին սատրապ։
6. Անտիոքոս I Երվանդականի թագը հայտնի էր «Հայկազյան» կամ «Հայկյան» անունով։
7. «Մայր ժողովուրդների» զբաղեցրած տարածքները գիտնականները անվանել են «նախահայրենիքներ»։
8. Հայկական հելլենիզմի երկրորդ փուլը կոչվում է «ուշ հելլենիզմ»։

**Տրվածներից որո՞նք են 652 թ. կնքված հայ-արաբական դաշնագրի հետևանքներ:**

1. Արաբական խալիֆայությունն առնվազն երեք տարի Հայաստանից հարկ չէր գանձելու, իսկ դրանից հետո հայերը վճարելու էին այնքան, որքան կամենային:
2. Բյուզանդացիների ներխուժման դեպքում խալիֆայությունն այնքան զորք էր ուղարկելու, որքան կամենային հայերը:
3. Հայաստանում տեղակայվելու էին սահմանափակ քանակությամբ արաբական զորքեր:
4. Հայոց եկեղեցին զբաղվելու էր միայն կրթական գործերով:
5. Արաբական խալիֆայությունը ճանաչում էր Հայաստանի տարածքային ամբողջականությունը:
6. Հայաստանում գանձվող հարկի հաշվին հայերը պահելու էին 15-հազարանոց այրուձի:
7. Պարսիկների ներխուժման դեպքում խալիֆայությունն պարտավորվում էր զորք ուղարկել Հայաստան:

**Թվարկվածներից որո՞նք են Փետրվարյան ապստամբության պատճառներ:**

1. Նոր իշխանությունների վարած «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը:
2. Վրաստանին պատերազմ հայտարարելու պատճառով շտապ իրականացված զորահավաքը:
3. Նոր իշխանությունների այն հայտարարությունը, որ Խորհրդային Ադրբեջանի հետ տարածքային վեճերը լուծվելու են հոգուտ ադրբեջանցիների:
4. Բնակչության ունեցվածքի կամայական բռնագրավումները, որոնք ուղեկցվում էին անհնազանդների ձերբակալություններով:
5. Նեպի քաղաքականության գործադրումը, որի հետևանքով կտրուկ վատթարացավ գյուղացիության դրությունը:
6. ՀՍԽՀ իշխանությունների բացահայտ թուրքամետ քաղաքականությունը և Թուրքիային տարածքային պահանջներ առաջադրելուց հրաժարվելու հայտարարությունները:
7. Խորհրդային իշխանության գործադրած քաղաքական բնույթի հետապնդումները և բռնությունները:

### Հայրենադարձությանը վերաբերող տրված պնդումներից որո՞նք են սխալ:

1. Խորհրդային Հայաստանի Ժողկոմխորհի որոշմամբ հայրենադարձությունը կազմակերպել է 1921 թ. ստեղծված Հայկական Բարեգործական ընդհանուր միությունը:
2. Հունաստանից ներգաղթած իզմիրցիների, սեբաստացիների, բյուրանիացիների հայրենակցական միությունը Երևանում հիմնել է Նոր Բուրանիա թաղամասը:
3. Սեբաստիայի միության հայերի խնդրանքով Խորհրդային Հայաստանում հիմնվել է գորգագործական արհեստանոց:
4. 1937-1938 թթ. հայրենադարձության դադարեցման պատճառը ԽՍՀՄ-ի՝ Թուրքիայից տարածքային պահանջներ չունենալու հայտարարությունն էր:
5. 1962-1965 թթ. կազմակերպված հայրենադարձության շնորհիվ Խորհրդային Հայաստան է վերադարձել 7000 մարդ:
6. 1946-1948 թթ. հայրենիք վերադարձած մարդկանց Խորհրդային Հայաստանը ի վիճակի է եղել լիովին ապահովելու աշխատանքով, բնակարանով:
7. 1921-1922 թթ. Միջագետքից հայրենադարձված սփյուռքահայերը բնակություն են հաստատել Վեդիի, Արտաշատի, Վարդենիսի, Գյումրու շրջաններում:

### Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ:

1. 1736 թ. Էրզրումի պայմանագրով Թուրքիան ճանաչել է Պարսկաստանի տիրապետությունն Արևելյան Հայաստանում և Արևելյան Վրաստանում:
2. Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանը ձեռք է բերել պետական ինքնավարություն:
3. Բաթումի պայմանագրով Օսմանյան կառավարությունը ճանաչել է Հայաստանի անկախությունը:
4. Ադրիանուպոլսի պայմանագրի արդյունքում Ռուսաստանը ձեռք է բերել Ղրիմի թերակղզին:
5. 1724 թ. Կոստանդնուպոլսի պայմանագրով Թուրքիան ճանաչել է մերձկասպյան տարածքների միացումը Ռուսաստանին:
6. Գյուլիստանի պայմանագրով Ռուսաստանին են անցել Ախալցխան և Ախալքալաքը:
7. Բրեստ-Լիտովսկի պայմանագրով և ռուս-թուրքական լրացուցիչ պայմանագրով Օսմանյան Թուրքիային են անցել Արևմտյան Հայաստանի ազատագրված մարզերը:
8. 1724 թ. ռուս-թուրքական պայմանագրի արդյունքում Թուրքիան գործողությունների ազատություն է ստացել Շամախիից արևելք ընկած տարածքներում:

**Բագրատունյաց թագավորությանը վերաբերող տրված պնդումներից որո՞նք են սխալ:**

1. Բագրատունյաց թագավորության ժամանակ հայոց սպարապետի պաշտոնը ժառանգաբար վարել է Զաքարյան իշխանական տոհմը:
2. Սմբատ I-ի օրոք կնքված հայ-բյուզանդական պայմանագիրը պատճառ է հանդիսացել, որ Սաջյան ամիրայի զորքերը ներխուժեն Հայաստան:
3. Երնջակ բերդի զորագունդը Սմբատ I-ի գլխավորությամբ մեկ տարի շարունակ դիմադրել է արաբներին:
4. 921 թ. Աշոտ II-ը Կոստանդնուպոլսում կնքել է հակաարաբական դաշինք:
5. Արաբների վերջին հենակետ Դվինի ամրապնդությունը Բագրատունյաց թագավորությանն է միացվել Սմբատ II-ի օրոք:
6. Գագիկ I-ի օրոք Բագրատունյաց թագավորության տիրույթներին են միացել Արտազ և Հայոց ձոր գավառները:
7. Աշոտ III-ի թագավորությունը ճանաչվել է Բյուզանդական կայսրության, արխագների թագավորի, հարևան ամրապնդությունների կողմից:
8. Սմբատ II-ը Բագրատունյաց թագավորությանն է միացրել Պահլավունիներին պատկանող Շիրակ գավառի Անի ամրոցը:

**Իրադարձությունների տրված շարքում ո՞ր երկուսն են խախտում ժամանակագրական ճիշտ հաջորդականությունը:**

1. Ստալինի անձի պաշտամունքի քննադատությունը ԽՍՀՄ XX համագումարում
2. Յակով Զարոբյանի դառնալը Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար
3. Ազգային միացյալ կուսակցության ղեկավար մարմնի՝ ԱՄԿ խորհրդի ստեղծումը
4. Խորհրդային Հայաստանում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի ստեղծումը
5. Հայերի կոտորածի 50-ամյակի նախապատրաստման հետ կապված միջոցառումների ծրագրի հաստատումը ՀԿԿ Կենտկոմի կողմից
6. Անդրանիկ Մարգարյանի դատապարտումը որպես հակախորհրդային գործիչ
7. Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի կառուցման ավարտը Ծիծեռնակաբերդում
8. Պարույր Հայրիկյանի դառնալը ԱՄԿ փաստացի ղեկավար

66

Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:

1. Արտավազդ V-ի բազմումը հայոց գահին
2. Վաղարշապատ քաղաքի հռչակումը Արշակունյաց թագավորության մայրաքաղաք
3. Տրդատի հաղթական մենամարտը գոթերի իշխանի դեմ
4. Վաղարշ II-ի գահակալության ավարտը Մեծ Հայքում
5. Սասանյանների գահակալման սկիզբը Պարթևստանում
6. Բակուր Արշակունու գահընկեցությունը
7. Խոսրով I-ի ձերբակալումը Ասորիքում

|  |  |  |  |  |  |  |  |
|--|--|--|--|--|--|--|--|
|  |  |  |  |  |  |  |  |
|--|--|--|--|--|--|--|--|

67

Իրադարձությունները դասավորե՛ք ժամանակագրական հաջորդականությամբ:

1. Վաչե Մամիկոնյանի զոհվելը
2. Գրիգորիս եպիսկոպոսի սպանության վրեժի լուծումը
3. Բզնունիքի Դատաբեն նախարարի մահապատիժը
4. Վրթանես Ա Պարթևի հայոց կաթողիկոս դառնալը
5. Հայոց եկեղեցու առաջին ժողովի գումարումը
6. Արիստակեսի ձեռնադրվելը եպիսկոպոս
7. Առաջին տիեզերական ժողովի գումարումը

|  |  |  |  |  |  |  |  |
|--|--|--|--|--|--|--|--|
|  |  |  |  |  |  |  |  |
|--|--|--|--|--|--|--|--|

68

Կատարե՛ք համապատասխանեցում:

ա. Կարապետ Սիմոնյան  
բ. Նվեր Սաֆարյան  
գ. Հայկ Հովակիմյան  
դ. Նելսոն Ստեփանյան  
ե. Սիմոն Զաքյան  
զ. Լազր Չափչախյան  
է. Արմենակ  
Խանփերյանց

1. ավիացիայի մարշալ
2. ԽՍՀՄ հերոս, հետախույզ
3. ԽՍՀՄ կրկնակի հերոս
4. հայկական 89-րդ դիվիզիայի հրամանատարը 1943թ. փետրվարից
5. Երկրորդ աշխարհամարտում հայ առաջին ԽՍՀՄ հերոսը
6. հայկական 390-րդ դիվիզիայի հրամանատարը
7. Հայրենական մեծ պատերազմի հայ առաջին ԽՍՀՄ հերոսը
8. զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ

|   |   |   |   |   |   |   |
|---|---|---|---|---|---|---|
| ա | բ | գ | դ | ե | զ | է |
|   |   |   |   |   |   |   |

- |                                                          |            |
|----------------------------------------------------------|------------|
| ա. Չորագետի հէկի կառուցման սկիզբը                        | 1. 1967 թ. |
| բ. Քանաքեռի այլումինի գործարանի առաջին հերթի գործարկումը | 2. 1927 թ. |
| գ. Վեցերորդ հնգամյա պլանի մեկնարկը                       | 3. 1956 թ. |
| դ. ԽՄԿԿ 21-րդ համագումարը                                | 4. 1950 թ. |
| ե. Առաջին հնգամյա պլանի մեկնարկը                         | 5. 1928 թ. |
| զ. Երևանի էլեկտրոնային արագացուցչի գործարկումը           | 6. 1925 թ. |
| է. ՀամԿ(բ)Կ 14-րդ համագումարը                            | 7. 1959 թ. |
|                                                          | 8. 1963 թ. |

|   |   |   |   |   |   |   |
|---|---|---|---|---|---|---|
| ա | բ | գ | դ | ե | զ | է |
|   |   |   |   |   |   |   |

Ստորև տրված պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրե՛ք «Ճիշտ է, «Միալ է», «Չգիտեմ» պատասխաններից որևէ մեկը:

- 1323 թ. հայ-եգիպտական պայմանագրով Կիլիկիան Եգիպտոսին է զիջել Այաս նավահանգիստը և Անավարզա քաղաքը:
- Դվինի երկրորդ եկեղեցական ժողովը հաստատել է հայ առաքելական եկեղեցու ազգային ինքնուրույնությունը:
- Պապի վարած անկախ քաղաքականության արդյունքում Հայաստանից վտարվեցին բյուզանդական զորքերը:
- Տիգրան Մեծի տերության տարածքը կազմված էր երեք կարգի հատվածներից՝ բուն հայկական հողեր, հպատակ թագավորություններ և քաղաքական ազդեցության ոլորտում գտնվող երկրներ:
- Մովսես Խորենացու հաղորդմամբ Բարդաճանն Անի ամրոցում գոյություն ունեցած մեհենական պատմագրության արխիվից թարգմանություններ է կատարել ասորերեն և հունարեն:
- Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո արքունի գրագրության, հոգևոր քարոզչության և ուսման ասպարեզներում կիրառվել են հունարենը, ապա արամեերենն ու պարսկերենը: